

## Ց Ա Ն Կ

Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրություն) կամ ջերմային էներգիայի արտադրության գործունեության լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի

Նշված գործունեության լիցենզավորման համար անհրաժեշտ է հայտով դիմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով՝ Հանձնաժողովի 2017 թվականի թիվ 53-Ն որոշմամբ հաստատված կարգի համապատասխան:

Հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

- գործարար ծրագիր.
- լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ հողի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթեր և համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված հատակագծի պատճենը. (ԱՀ Կառավարություն, Տեղական ինքնակառավարման մարմիններ, ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի պետական կադաստրի վարչություն).
- նախագծային կազմակերպության հետ կնքված պայմանագիր նախագծային-նախահաշվային աշխատանքներ կատարելու վերաբերյալ և դրանց կատարման ժամանակացույց.
- հայտարարություն մամուլում՝ Արցախի Հանրապետությունում ամենամեծ տպաքանակ ունեցող թերթում. («Ազատ Արցախ» հանրապետական թերթ)
- երաշխիքներ(ԱՀ-ում կամ ՀՀ-ում գործող որևէ բանկի կամ ԱՀ կառավարության կողմից տրամադրված երաշխիք, որի գումարի մեծությունը պետք է հավասար լինի կառուցվող կայանի հզորության (արտահայտված կիլովատտերով) և «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված բազային տուրքի երկուսուկեսապատիկի արտադրյալին, սակայն ոչ պակաս, քան 500 000 ՀՀ դրամը)
- ջրօգտագործման թույլտվություն՝ հիդրոէլեկտրակայաններում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար. (ԱՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն)
- այլ անձի (անձանց) պատկանող հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն՝ միայն խմելու ջրատարների կամ ոռոգման համակարգերի վրա կառուցվող հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության համար.
- էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միանալու նախնական տեխնիկական պայմաններ, որը կներառի էլեկտրական ցանցին միացման կետի վերաբերյալ տեղեկատվություն («Արցախէներգո»ՓԲԸ).
- պետական տուրքի վճարման անդորրագիր («Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված չափով՝ ըստ հզորության).

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված կարգին համապատասխանելու դեպքում Հանձնաժողովը հայտի վերաբերյալ որոշում է կայացնում և տրամադրում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության կամ ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա, որը ներառում է կառուցման ժամանակահատված:

Կատարող՝ Հանրային ծառայությունների կարգավորման բաժին